<<ԿԱՍԿԱԴ-ՄԻՐՏԵԿ>> ՓԲԸ-ի հայցն ընդդեմ «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ գնումների հանձնաժողովի 14.01.2026թ. թիվ 50/2 արձանագրությունն անվավեր ճանաչելու՝ «Երէներգո» ՓԲԸ-ի ներկայացրած առաջարկները մրցութային փաստաթղթերով սահմանված անհրաժեշտ տեխնիկական չափանիշներին համապատասխանող ճանաչելու, «Երէներգո» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու որոշում կայացնելու մասերով անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «ԵՐԷՆԵՐԳՈ» ՓԲԸ-ի միջև 29.01.2026թ. կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու, և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին՝ «ԿԱՍԿԱԴ-ՄԻՐՏԵԿ» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու և վերջինիս հետ 100Ա եռաֆազ քառալար էլեկտրոնային բազմասակագնային դարձափոխիչային ուղիղ միացման հաշվիչների մատակարարման պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել մասնակի:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ գնումների հանձնաժողովի 14.01.2026թ. թիվ 50/2 արձանագրությունը՝ «Երէներգո» ՓԲԸ-ի ներկայացրած առաջարկները մրցութային փաստաթղթերով սահմանված անհրաժեշտ տեխնիկական չափանիշներին համապատասխանող ճանաչելու, «Երէներգո» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու, վերջինիս հետ պայմանագիր կնքելու որոշում կայացնելու մասերով, ինչպես նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Երէներգո» ՓԲԸ-ի միջև 29.01.2026թ. կնքված պայմանագիրը ճանաչել անվավեր:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից հօգուտ «ԿԱՍԿԱԴ-ՄԻՐՏԵԿ» ՓԲԸ-ի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հայցը մնացած մասով, մերժել:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEC2-18ED-42B5-A532 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am